

**Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2016թ.  
նոյեմբերի 23-ի նիստի արձանագրություն**

**Արձանագրություն N 1-11/16**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2016 թ.-ի  
նոյեմբերի 23-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ., դասախոս), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թոքմաջյան Վ.Հ. (տ.գ.դ., դոցենտ), Առաքելյան Ա.Ա., Զաքարյան Գ.Է. (ուսխորհրդի նախագահ), Մուսայելյան Վ.Ս., Շահբազյան Ա.Վ., Հակոբյան Ռ.Ս.:

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Հարությունյան Ռ.Մ. Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ):

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի մասին:

2.Ուսման որակի ապահովման մասին.

3.Այլ հարցեր

**Լսեցին** 1-Ռեկտորատի քննարկմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի մասին (զեկուցող՝ Հ.Վ.Թոքմաջյան):

**Արտահայտվեցին**-Ա.Գուլյան: Առաջարկվեց «սովորող» բառից հետո ավելացնել (ասպիրանտ կամ հայցորդ) բառակապակցությունը:

**Որոշեցին** 1-Հավանություն տալ «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգին և այն ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

**Լսեցին 2-** Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսման որակի ապահովմանն ուղղված միջոցառումների մասին (զեկուցող՝ Ռ.Մ.Հարությունյան):

**Որոշեցին 2.1-**Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին հսկողություն սահմանել ուսումնական պարապմունքների կայացման, ուսանողների հաճախումների մասնակցության աճի և դասախոսների աշխատանքային կարգապահության բարձրացման ուղղությամբ, նպաստել դասախոսների տեղեկատվական տեխնոլոգիաների և օտար լեզուների իմացության մակարդակի բարելավման գործընթացներին:

2.2-Հանձնարարել ամբիոնների վարիչներին պարբերաբար կազմակերպել դասալսումներ՝ երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացը, մանկավարժական արվեստը, ուսանողների հետ միայն գրական հայերենով շփումը ապահովելու նպատակով, բացահայտել և վերացնել առկա թերությունները, ապահովել կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ներդրումը:

**Լսեցին 3-**Պրոռեկտոր՝ Պ.Գասպարյանը ռեկտորատին ներկայացրեց Շուշի քաղաքի բնակիչ՝ Գ.Ա.Նալբանդյանի դիմումը, համաձայն որի խնդրում է փոխհատուցել նրա հետ կնքված N5 պայմանագրով սահմանված էլեկրաէներգիայի գումարից ավելացած 8000 (ութ հազար) դրամը:

**Որոշեցին 3-**Հանձնարարել գլխավոր հաշվապահին փոխհատուցել Շուշի քաղաքի բնակիչ՝ Գ.Ա.Նալբանդյանին 8000 (ութ հազար) դրամ:

<b>Նախագահ՝</b>	<b>ստորագրություն</b>	<b>Հ.Վ.Թորմաջյան</b>
<b>Քարտուղար՝</b>	<b>ստորագրություն</b>	<b>Ա.Ա.Առաքելյան</b>